

«___» «_____» 2016 թվականի N___

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ
ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 131-Ն որոշման N 1 հավելվածի 94-րդ կետի՝

Հավանություն տալ Տեղեկատվության ազատության ոլորտի արդիականացման հայեցակարգին՝ համաձայն հավելվածի:

Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Համառոտագիր

Սույնով ներկայացվում են տեղեկատվության ազատության (այսուհետ նաեւ՝ ՏԱ) ոլորտում (մասնավորապես՝ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-11-Ն օրենքում (այսուհետ նաեւ՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, ՏԱ մասին օրենք, Օրենք)) օրենսդրական բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտությունը Հայաստանում, առկա իրավիճակը, այն խնդիրները, որոնք առկա են ՏԱ ոլորտում, մասնավորապես, առաջարկվում է վերանայել ՏԱ օրենքի հիմնական սկզբունքները, հարցմանը ներկայացվող պահանջները, տեղեկատվության ազատության պրոակտիվ (սեփական նախաձեռնությամբ) ապահովում, տեղեկությունների համար վճարելու պայմանները եւ կարգը, սահմանել էլեկտրոնային հարցման հետ կապված իրավահարաբերությունները, հարցման պատասխանին ներկայացվող պահանջները, փաստաթղթերի ռեեստր հասկացությունը, անձի՝ ինքն իր մասին տեղեկություն ստանալու իրավունքը, անձի՝ հանրային նշանակության տեղեկություններ ստանալու իրավունքը, վերանայել տեղեկատվության ազատության համար պատասխանալու լիազոր մարմինը, նախատեսել ՏԱ պատասխանատուների ինստիտուտի ներդրումը, սահմանել ՏԱ իրավունքի չարաշահման դեպքերը եւ վերանայել պատասխանատվությունը՝ տեղեկատվություն տնօրինողների

կողմից տեղեկատվության մատչելիության եւ հրապարակայնության ապահովման ոլորտում օրենքով սահմանված պարտականությունները չկատարելու համար:

2. Ներածություն

Տեղեկատվության ազատության իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է, որի պատշաճ օրեսդրական կարգավորման եւ որի իրականացման մեխանիզմների բացակայության պայմաններում մարդու համար էապես կոժվարանա նաև այլ իրավունքների իրականացումը: Կարևորելով տեղեկություն ստանալու իրավունքը՝ ամբողջ աշխարհում, ինչպես նաև մեր երկրում, ընդունվել են տեղեկատվության ազատության վերաբերյալ իրավական ակտեր («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք), ՏԱ իրավունքն ամրագրվել է ՀՀ սահմանադրությունում (2015թ.-ի խմբագրությամբ ՀՀ սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածներ), միջազգային իրավական ակտերում:

Հայաստանի Հանրապետության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի խմբագրությամբ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատություն», իսկ 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք»:

«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է 2003թ. սեպտեմբերի 23-ին (ուժի մեջ է մտել 2003թ.-ի նոյեմբերի 15-ին): Անցած 13 տարիների ընթացքում դրսևորվեցին ինչպես օրենքի կենսունակությունն ու հասարակական անհրաժեշտությունը, այնպես էլ ի հայտ եկան մի շարք բացթողումներ, որոնց վերացումը կբարձրացնի օրենքի կիրառելիությունը:

Մասնավորապես՝ Օրենքի 5-րդ հոդվածով և 10-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված էր ընդունել տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան

առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգերը, որոնք Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվեցին միայն 2015թ.-ի հոկտեմբերին 15-ին ՀՀ կառավարության N 1204-Ն որոշմամբ (ուժի մեջ է մտել 2016թ.-ի հունվարի 1-ից): Սակայն մի կողմից կան հարցեր, որոնք չկարգավորվեցին այս որոշմամբ, քանի որ դրանք օրենքի կարգավորման դաշտում են, մյուս կողմից առավել կարելի է բնորոշել կայուն հասարակական հարաբերությունները պետք է կարգավորվեն օրենքներով, ուստի կառավարության որոշմամբ կարգավորվող մի շարք հարցեր առավել նպատակահարմար է կարգավորել ՏԱ մասին օրենքով:

3. Տեղեկատվության ազատության իրավունքը կարգավորող միջազգային փաստաթղթերը

Տեղեկատվության ազատության ոլորտը Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում է ՀՀ կողմից վավերացված միջազգային իրավական ակտերով, ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով: Հայաստանը՝ որպես մի շարք միջազգային կազմակերպությունների անդամ, ստորագրել է մարդու իրավունքներին վերաբերող կարևորագույն միջազգային փաստաթղթերը: Դրանով իսկ Հայաստանը պարտավորվել է հարգել մարդու իրավունքները, այդ թվում՝ արտահայտվելու և տեղեկատվության ազատության իրավունքները:

Եվրոպական իրավունքի ոլորտում մարդու իրավունքները սահմանող երեք հիմնական միջազգային փաստաթղթերն են Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիան եւ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագիրը: Տեղեկություն փնտրելու և ստանալու իրավունքը հռչակվում է Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագրի 19-րդ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի 10-րդ,

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագրի 19-րդ հոդվածներով:

Որպես ՄԱԿ-ի անդամ (1992 թ.-ից)՝ Հայաստանը միացել է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին, որի Հոդված 19-ում հռչակվում է. «Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքներ ունենալու և արտահայտվելու իրավունք. այս իրավունքը ներառում է համոզմունքներին անարգել հավատարիմ մնալու և տեղեկություններ ու գաղափարներ որոնելու, ստանալու ու տարածելու ազատություն, լրատվության ցանկացած միջոցներով, անկախ պետական սահմաններից»:

Հայաստանը վավերացրել է նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1993թ.-ին), որի 19-րդ հոդվածում խոսվում է կարծիք ունենալու իրավունքի և անկախ պետական սահմաններից, ցանկացած տեսակի տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատության մասին:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն 2011թ.-ին մշակել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածի մեկնաբանման ուղեցույց: Անդրադառնալով տեղեկատվություն տնօրինողներին, տեղեկության հասկացությանը՝ ուղեցույցը ներառել է նաև դրույթներ հանրային նշանակություն ունեցող պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ: Մասնավորապես, ուղեցույցում նշված է, որ տեղեկատվության ազատության իրավունքի իրականացման համար դաշնագրի մասնակից պետությունները պետք է ակտիվորեն հրապարակայնացնեն հանրային նշանակություն ունեցող պաշտոնական տեղեկությունները, ապահովեն այդպիսի տեղեկատվության հեշտ, արագ, արդյունավետ և պրակտիկ հասանելիությունը: Համաձայն ուղեցույցի՝ մասնակից պետությունները պետք է նաև համապատասխան միջոցներ ձեռնարկեն, որոնց դեպքում կապահովվի տեղեկության մատչելիությունը և տեղեկություններ փնտրելու և ստանալու հնարավորությունը: Այդպիսի միջոց է, օրինակ, տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրությունը: Ուղեցույցն արձանագրում է, որ պետք է ժամանակին ընթացք տրվեն տեղեկություն ստանալու հարցումներին՝ դաշնագրով սահմանված կանոններին համապատասխան: Անդրադարձ է կատարվել նաև տեղեկության տրամադրման համար վճարներին՝ սահմանելով, որ դրանք չպետք է այնպիսին լինեն, որ

տեղեկության տրամադրման արգելք դառնան: Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ տեղեկության տրամադրումը մերժվի միայն հիմնավոր պատճառներով, ինչպես նաև ստեղծվեն բողոքարկման մեխանիզմներ տեղեկության տրամադրումը մերժելու կամ տեղեկություն ստանալու հարցումներին չպատասխանելու դեպքում:

2002 թ.-ին Հայաստանը՝ որպես Եվրոպայի խորհրդի անդամ, վավերացրել է Մարդու իրավունքների մասին Եվրոպական կոնվենցիան, որի 10-րդ հոդվածը պաշտպանում է արտահայտվելու և տեղեկատվության ազատությունները: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու, տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում»:

Կոնվենցիան նախատեսում է նաև թույլատրելի սահմանափակումներ, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու համար:

2009թ.-ի հունիսի 18-ին Եվրոպայի խորհրդի կողմից ընդունվեց կարելորագույն մի փաստաթուղթ՝ **Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին կոնվենցիան,** որը սահմանում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման, ինչպես նաև հանրային նշանակության մարմինների պաշտոնական փաստաթղթերի մատչելիությունը և կարգավորում է դրա հետ կապված ընդհանուր իրավահարաբերությունները: Համաձայն կոնվենցիայի նախաբանի՝ կոնվենցիան ընդունվել է հաշվի առնելով պետական մարմինների թափանցիկության կարևորությունը բազմակարծ և ժողովրդավարական հասարակությունում, ինչպես նաև այն, որ

«պաշտոնական փաստաթղթերի հասանելիության իրավունքի գործադրումը հանրության համար տեղեկատվության աղբյուր է, օգնում է հանրությանը կարծիք կազմել հասարակության վիճակի և պետական մարմինների վերաբերյալ, նպաստում է պետական մարմինների ազնվությանը, կարողություններին, արդյունավետությանը և պատասխանատվությանը՝ դրանով իսկ օգնելով նրանց լեգիտիմության հաստատմանը»:

Այս փաստաթուղթը, մի կողմից եւս մեկ անգամ հաստատելով միջազգային պայմանագրերով եւ ՀՀ ներպետական օրենսդրությամբ սահմանված՝ տեղեկատվության ազատության հիմնարար իրավունքը՝ մյուս կողմից սահմանում է պետական մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների, մեկ բառով՝ իշխանության բաց եւ թափանցիկ աշխատելու պարտականությունը եւ իշխանության իրական կրողի՝ ժողովրդի կողմից վերահսկելի լինելու սկզբունքը: Հայաստանի Հանրապետությունը դեռ չի միացել այս կոնվենցիային:

Տեղեկատվության ազատության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի ընդունած փաստաթղթերի մի մասն անդրադառնում է տեղեկատվության ազատության իրավունքի իրականացմանը այնպիսի կարևոր ոլորտում, ինչպիսին քրեական գործերի վարույթն է: Եւս իրավական ակտերն անդրադառնում են ինչպես ուղղակիորեն քրեական վարույթի հետ կապված տեղեկատվության տրամադրման առանձնահատկություններին, այնպես էլ ճգնաժամի դեպքում, լրագրողական հետաքննությունների դեպքում, և ահաբեկչության դեմ պայքարի ոլորտում տեղեկատվության տրամադրման առանձնահատկություններին:

Տեղեկատվության ազատության իրավունքի վերաբերում են նաեւ հետեւյալ փաստաթղթերը.

Ճգնաժամի դեպքում արտահայտվելու ազատության և տեղեկատվության ազատության պաշտպանության վերաբերյալ Եւս նախարարների կոմիտեի ուղեցույց (ընդունվել է 2007թ.-ի սեպտեմբերի 26-ին):

Ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում ՁԼՄ-ներում խոսքի և տեղեկատվության ազատության վերաբերյալ հռչակագիր (ընդունվել է 2005թ.-ի մարտի 2-ին):

Հետաքննական լրագրության պաշտպանության և խթանման վերաբերյալ Եւս հռչակագիր (ընդունվել է 2007թ.-ի սեպտեմբերի 26-ին):

Չանգվածային լրատվամիջոցներով քրեական վարույթի հետ կապված տեղեկատվության տրամադրման վերաբերյալ հոչակագիր (ընդունվել է 2003թ.-ի հուլիսի 10-ին):

Չանգվածային լրատվամիջոցներով քրեական վարույթի հետ կապված տեղեկատվության տրամադրման վերաբերյալ R (2003) 13 հանձնարարական (ընդունվել է 2003թ.-ի հուլիսի 10-ին):

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՏԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Էլեկտրոնային հարցմամբ դիմելու հնարավորության ապահովում

Առկա վիճակի նկարագրություն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը տալիս է «հարցում» եզրույթի բացատրությունը, ըստ որի՝ հարցումը «տեղեկություն փնտրելու և (կամ) դա ստանալու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր դիմում» է: Այսպես, Օրենքը նախատեսում է հարցման երկու ձև՝ գրավոր եւ բանավոր: Միաժամանակ, օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ «Բանավոր հարցման պատասխանը տրվում է, եթե՝

1) պահանջվող տեղեկության տրամադրումը կարող է կանխել պետական, հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը.

2) անհրաժեշտ է ճշտել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի մոտ համապատասխան տեղեկության առկայության փաստը.

3) անհրաժեշտ է պարզաբանել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի կողմից գրավոր հարցումների քննարկման կարգը»:

Այսինքն, օրենսդիրը սահմանափակում է բանավոր հարցմամբ դիմելու դեպքերը՝ որպես տեղեկություն ստանալու հիմնական տարբերակ թողնելով գրավոր հարցումը: Արդյունքում, Օրենքում գրեթե ամբողջական բացակայում են էլեկտրոնային հարցումների հետ կապված դրույթներ: Էլեկտրոնային եղանակով հարցում կատարելու և հարցման պատասխան ստանալու վերաբերյալ օրենքում առկա միակ դրույթը նախատեսված է օրենքի 10-րդ հոդվածում: Այդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ «սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում հետևյալ դեպքերում՝ տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցով) տրամադրելիս»: Էլեկտրոնային եղանակով հարցում կատարելու և հարցման պատասխան ստանալու վերաբերյալ իրավակարգավորումների բացակայությունը տեղեկատվության ազատության իրավունքի կիրառման պրակտիկայում առաջացնում է

մի շարք խնդիրներ, այդ թվում՝ իրավական: Այսպես, «Առավոտ» օրաթերթն ընդդեմ Լոռու մարզպետարանի թիվ ՎԴ6/0396/05/09 վարչական գործով պատասխանող Լոռու մարզպետարանը պնդում էր, որ էլեկտրոնային փոստով ուղարկված հարցումը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի իմաստով գրավոր հարցում չէ: Դատարանն այս հանգամանքին չանդրադարձավ՝ համարելով գործի համար էական նշանակություն չունեցող: Այնուամենայնիվ, տեղեկություն տնօրինողների կողմից չկա միասնական մոտեցում էլեկտրոնային հարցումներ ընդունելու եւ դրանց պատասխանելու ընթացակարգերի վերաբերյալ:

Էլեկտրոնային հարցումների հետ կապված դրույթները առավել մանրամասն կարգավորման են ենթարկվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» թիվ 1204-Ն որոշմամբ:

Որոշման 1-ին հավելվածի 6-րդ կետով պարտադիր պահանջ է սահմանվել տեղեկատվություն տնօրինողների համար՝ իրենց պաշտոնական կայքերում ունենալ «Ուղարկել հարցում/դիմում» կամ այլ համապատասխան բաժին, որտեղ պետք է տեղադրվի հարցման օրինակելի ձևը: Բացի այդ նույն կետում սահմանվել է հարցման օրինակելի ձևը:

Թեև նշված որոշումը հնարավորինս փորձում է կարգավորել տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման հետ կապված հարաբերությունները, այնուամենայնիվ, «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում առկա մի շարք թերություններն ու հակասությունները, ինչպես նաև մի շարք հնացած կարգավորումների առկայությունը թույլ չի տալիս գործող օրենսդրության շրջանակներում ամբողջությամբ կարգավորել վերոնշյալ հարցերը:

Հայեցակարգային լուծումները

Ա. «Տեղեկատվության ազատության մասին» նոր օրենքի նախագծով ամբողջական կարգավորման պետք է ենթարկվեն էլեկտրոնային եղանակով հարցում ուղարկելու և հարցման պատասխան ստանալու հետ կապված հարաբերությունները:

- Մասնավորապես՝ առաջարկվում է հստակեցնել հարցման (այդ թվում էլեկտրոնային) օրինակելի ձևին ներկայացվող պահանջները:
- Սահմանել, որ հարցման օրինակելի ձևը պարունակում է դիմողի անունը և ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը), դիմողի բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը (հասցեն), էլեկտրոնային փոստի հասցեն, հարցման բուն էությունը (պահանջվող տեղեկության վերաբերյալ հնարավոր տվյալներ), ինչպես նաև ծանուցում ստանալու եղանակի մասին նշում:

Բ. «Տեղեկատվության ազատության մասին» նոր օրենքում ներառել Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» թիվ 1204-Ն որոշման 1-ին հավելվածի 6-րդ կետով նախատեսված այն դրույթը, որի համաձայն՝ «տեղեկատվություն տնօրինողի պաշտոնական կայքում պետք է առկա լինի «Ուղարկել հարցում/դիմում» կամ այլ համապատասխան բաժին, որտեղ, ելնելով գործունեության առանձնահատկություններից, պետք է տեղադրվեն տեղեկատվություն տնօրինողին ներկայացվող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված տեղեկություն ստանալու մասին հարցումների օրինակելի ձևերը և դրանք լրացնելու վերաբերյալ ցուցումները:»:

Հարկ է նշել, որ SU օրենսդրությունների միջազգային ռեյտինգի համաձայն Հայաստանի Հանրապետությունը զբաղեցնում է 34-րդ տեղը: SU օրենսդրությունների միջազգային ռեյտինգի Հայաստանի Հանրապետությանը վերաբերող զեկույցի 56-րդ կետում նշվում է հասարակության տեղեկացվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների նախատեսումը: Վերոնշյալ դրույթի նախատեսումը իր հերթին կնպաստի հասարակության տեղեկացվածության մակարդակի բարձրացմանն ու անձի՝ տեղեկություն ստանալու իրավունքի իրացմանը:

2. Հարցմամբ դիմելու յուրաքանչյուրի իրավունքի ապահովում (ստորագրություն, քաղաքացիություն)

Առկա վիճակի նկարագրություն

«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր հարցման մեջ նշվում է դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը: Գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը): Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «3. Գրավոր հարցմանը պատասխան չի տրվում, եթե՝ 1) դա չի պարունակում սույն հոդվածի 1-ին մասում նշված բոլոր տվյալները (...):»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի (...) առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատություն», իսկ 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք»:

Այսպես, հարցման մեջ դիմողի քաղաքացիությունը ներառելու պահանջը մի կողմից խնդրահարույց է ՀՀ Սահմանադրության վերոնշյալ դրույթների տեսանկյունից, մյուս կողմից տեղեկատվության ազատության իրավունքի կիրառման պրակտիկան չի բացահայտել այս նորմի իմաստը, այսինքն, նման պահանջն արդարացված չէ, այն չի կիրառվում տեղեկություն տնօրինողների կողմից տեղեկություն ստանալու հարցումներին պատասխանել-չպատասխանելու վերաբերյալ որոշումներ կայացնելու համար, միաժամանակ, տեղեկություն տնօրինող մարմինները չունեն գործնական եւ իրավական մեխանիզմներ ստուգելու իրենց տեղեկություն ստանալու հարցումներով դիմած անձանց քաղաքացիության իսկությունը: Նույն հիմնավորմամբ՝ հանրային (հանրամատչելի) տեղեկության տրամադրման դեպքում առարկայազուրկ է դառնում ստորագրության պահանջը:

Վերոնշյալի համատեքստում հարկ է հաշվի առնել, որ ստորագրության պահանջը կարող է արդարացված լինել այն դեպքերում, երբ խոսքը գնում է անձնական տվյալ հանդիսացող տեղեկությունների մասին, այսինքն՝ անձի կողմից ինքն իր մասին տեղեկություն փնտրելու դեպքերում: Այնինչ հանրային տեղեկության տրամադրման դեպքում դիմողի անձը պարզելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ նման տեղեկությունը պետք է տրամադրվի ցանկացած դիմողի, ուստի դիմողի անձն էական չէ: Բացի այդ՝ տեղեկատվության ազատությունը ներառում է նաեւ տեղեկությունն անարգել տարածելու իրավունք, ուստի տեղեկությունը մեկին տրամադրելը նշանակում է, որ դա կարող է հրապարակային դառնալ բոլորի համար: ՏԱ իրավունքի կիրառման պրակտիկան վկայում է, որ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով գրավոր հարցման վավերապայմանները օգտագործվում են դիմողի հետ հետադարձ կապի (տեղեկությունները հասցեատիրոջը հասցնելու) համար, ուստի այս առումով նույնպես ստորագրության եւ քաղաքացիության պահանջները չեն համապատասխանում ՏԱ իրավունքի զարգացման ուղղությանը:

«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված այս դրույթներն անհարկի ձևական պահանջներ է նախատեսում անձանց համար՝ տեղեկատվության ազատության ապահովման բնագավառում իրենց իրավունքներն իրացնելու հետ կապված: Այս հարցի վերաբերյալ իր դիտարկումներն է կատարել նաև հանրային եւ միջազգային իրավունքի

գերմանացի մասնագետ, Համբուրգի համալսարանի պրոֆեսոր Օթթո Լուխթերհանդը՝ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի հոկտեմբերի 10-ի օրենքի վերաբերյալ 2015 թվականի հուլիսին իր կողմից տրված եզրակացության մեջ: Եզրակացության 30-րդ էջում անդրադառնալով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասին՝ դոկտոր պրոֆեսորը նշում է. «Իմ կարծիքով հիմնավորված չէ աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրի նշումը, որը պահանջում է 1-ին մասը: Պարզ չէ, թե ո՞րն է այդ տվյալը նշելու պահանջի հիմքը: Ասածը վերաբերում է նաև քաղաքացիությունը նշելուն. չէ՞ որ, ինչպես արդեն ասել եմ վերևում, տեղեկատվություն ստանալու իրավունքը մարդու իրավունք է, այսինքն՝ գործում է նաև օտարերկրացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց համար:»:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ ՏԱ օրենսդրությունների միջազգային ռեյտինգի՝ Հայաստանի Հանրապետությանը վերաբերող զեկույցի 14-րդ կետում որպես խնդիր մատնանշված են տեղեկություն ստանալու համար ուղարկվող հարցումներում հարցում ուղարկողի քաղաքացիության և ստորագրության պարտադիր նշումները:

Հայեցակարգային լուծումները

Ա. Վերանայել «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում հարցման օրինակելի ձևին ներկայացվող պարտադիր պահանջների շարքում քաղաքացիության նշման և ստորագրության առկայության հետ կապված դրույթները:

Բ. Ապահովել մարդկանց անձնական տվյալների, անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքի պաշտպանությունը:

- «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում որոշակի առանձնահատկություններ նախատեսել այն դեպքերի համար, երբ տեղեկությունը վերաբերում է դիմողին, ինչպես նաև դիմող ֆիզիկական անձի անձնական, ընտանեկան կյանքին կամ նրա խնամարկյալի, հոգաբարձության տակ գտնվողի, մերձավոր հարազատների իրավունքներին,

ազատություններին, պարտականություններին, իրավունքների սահմանափակումներին կամ պատասխանատվության:

- Նախատեսել, որ այն դեպքերում, երբ հարցումով պահանջվող տեղեկությունը վերաբերում է դիմողին, ապա բացի հարցման օրինակելի ձևին ներկայացվող պահանջներից, հարցումը պետք է պարունակի դիմողի ստորագրությունը և նրա անձը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ եթե դիմողը լիազորված է այլ անձի անունից տեղեկություն ստանալու, օգտագործելու կամ տարածելու համար, ապա նաև համապատասխան լիազորագիրը:(

Գ. Սահմանել ստորագրություն տալու եղանակները:

- Ապահովել, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստորագրությունների բոլոր ձևերը ընդունելի եւ կիրառելի լինեն հարցում ներկայացնելու համար:
- Անհրաժեշտության դեպքում սահմանել տեխնիկական միջոցներով դրված ստորագրություններով (օրինակ՝ թվային ստորագրությամբ) հարցումներ ներկայացնելու/ընդունելու առանձնահատկությունները:
- Սահմանել անձի ստորագրության իսկության կասկածի (օրինակ ներկայացրած անձը հաստատող փաստաթղթի եւ հարցման ստորագրությունների անհամապատասխանության) դեպքում տեղեկություն տնօրինողի գործառույթները:

Դ. Տեղեկատվության ազատության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցնել 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածներին:

- Առաջարկել կարիգավորումներ օտարերկրյա աձանց կողմից տեղեկատվություն ստանալու կարգի և պայմանների վերաբերյալ:

3. Հարցման պատասխանին ներկայացվող պահանջները, մասնակի մատչելիություն

Առկա վիճակի նկարագրություն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում հարցման պատասխանին ներկայացվող հստակ պահանջներ սահմանված չեն: ՏԱ մասին օրենքում չկա որևէ դրույթ, որտեղ առկա լինի նշում, թե հարցման մեջ առաջադրվող հարցերին ինչ ձևով և ինչ ծավալով պատասխան պետք է տրվի: Այս խնդրի կարևորությունը պայմանավորված է պրակտիկայում հաճախակի հանդիպող այն իրավիճակներով, երբ ուղարկված հարցման մեջ նշված են հստակ համարակալմամբ հարցեր, իսկ դրանց տրվող պատասխանները ձևակերպվում են մեկ միասնական պարբերությամբ: Պրակտիկայում շատ հաճախ հանդիպում են իրավիճակներ, երբ առաջադրված հարցերի կապակցությամբ ներկայացված պատասխանը ոչ միայն մեկ պարբերությամբ է ձևակերպված, այլ նաև պարունակում է առաջադրված հարցերի միայն մի մասի պատասխանները: Բարձրացված հարցի կապակցությամբ հարկ է նշել, որ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում առկա է մեկ դրույթ միայն, որը ինչ-որ չափով անդրադարձ է կատարում հարցման պատասխանին ներկայացվող պահանջներին: Մասնավորապես, Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝ (...) 3) տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «2. Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ»: Սակայն, պրակտիկայում հաճախ այս դրույթը մեկնաբանվում է ՏԱ իրավունքն անհարկի սահմանափակելու համար, օրինակ, եթե փաստաթղթում առկա մի տվյալն է միայն գաղտնիք պարունակում, մերժվում է ամբողջ տեղեկության տրամադրումը:

«Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական

և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ին թիվ 1204-Ն որոշմամբ փորձ է կատարվել կանոնակարգել հարցման պատասխանին ներկայացվող պահանջների եւ տեղեկության մասնակի մատչելիության հետ կապված հարցերը: Մասնավորապես, Որոշման 2-րդ հավելվածի 8-րդ կետի համաձայն. «Հարցման պատասխանը պետք է լինի հավաստի և լրիվ՝ պարունակելով բոլոր առաջադրված հարցերի հիմնավոր պատասխանները: Դիմողի կողմից մեկից ավելի հարցերի առաջադրման դեպքում պետական մարմինը հերթական համարակալման միջոցով տրամադրում է բոլոր հարցերի հավաստի և լրիվ պատասխանները»: Բացի այդ Որոշման մեջ ամրագրվել և մանրամասնեցվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթը. Որոշման 2-րդ հավելվածի 7-րդ կետի համաձայն՝ «Սույն կարգի 6-րդ կետով սահմանված դեպքում տեղեկությունը (տրամադրման ենթակա փաստաթուղթը) պետք է տրամադրվի մերժման ենթակա տեղեկություններն անընթեռնելի դարձնելու (ծածկելու, սևացնելու կամ ջնջելու) միջոցով՝ չխմբագրելով տեղեկության (փաստաթղթի) մնացած մասը: Եթե տեղեկատվություն տնօրինողի կողմից տրամադրվող տեղեկության նշանակալի (տասնհինգ և ավելի տոկոս) մասը պետք է անընթեռնելի դարձվի, ապա տեղեկությունը կարող է տրամադրվել թույլատրելի էջերի կամ քաղվածքի տեսքով:»:

Թեպետ վերոնշյալ դրույթներով փորձ է կատարվում կանոնակարգել հարցման պատասխանին ներկայացվող պահանջները եւ տեղեկության մասնակի մատչելիության խնդիրը, սակայն վերոնշյալ հարցի կապակությամբ առկա կարգավորումները առավել նպատակահարմար է ամբողջական տեսքով նախատեսել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, ինչը հնարավորություն կտա ամրագրել վերոնշյալ դրույթները ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտում և խուսափել ներկայացվող հարցումների հետ կապված պրակտիկայում առաջացող մի շարք խնդիրներից:

Հայեցակարգային լուծումները

Ա. Ապահովել տեղեկություններ փնտրող անձին հավաստի և ամբողջական տեղեկության տրամադրումը:

- «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանել հարցման պատասխանին ներկայացվող պահանջները:
- «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանել տեղեկության մասնակի մատչելիության կանոնները:

4. Տեղեկատվության ազատության պրոակտիվ ապահովում

Առկա վիճակի նկարագրություն

Տեղեկատվության ազատության կարելի է ասել, որ տարրերից է պրոակտիվ (սեփական նախաձեռնությամբ) հրապակման սկզբունքը: Այս սկզբունքի էությունն այն է, որ տեղեկություն տնօրինող մարմինները սեփական նախաձեռնությամբ հրապարակում են իրենց գործունեությանն առնչվող տեղեկություններ՝ օգտագործելով նաեւ նոր տեխնոլոգիաների հնարավորությունները:

Տեղեկատվության ազատության պրակտիկան ցույց է տալիս, որ հասարակության համար առավել հեշտ ու արդյունավետ է ՏԱ իրավունքի իրականացումը, եթե պրոակտիվ հրապարակման գործառույթը պատշաճ կերպով է իրականացվում պետական մարմինների կողմից: Հարցումների միջոցով տեղեկատվություն ստանալը ժամանակատար և ծախսատար է: Պրոակտիվ հրապարակման գործառույթը օգտակար է առաջին հերթին նաեւ պետական մարմինների համար, քանի որ խնայում է պետական ռեսուրսները, տեխնիկական միջոցները եւ ժամանակը:

Սրանից ածանցվող մյուս կարելի է ասել, որ սեփական նախաձեռնությամբ հրապարակված տեղեկատվությունը պետք է իսկապես հասանելի ու մատչելի լինի մարդկանց համար: Այն պետք է ներկայացվի այնպես, որ հեշտ լինի այն գտնելը, իսկ ընթերցելիս՝ պարզ և հասկանալի:

ՀՀ-ում տեղեկության պրոակտիվ հրապարակման կանոնները սահմանվել են 2003թ ընդունված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով: Հոդվածում ամրագրված է 13 խումբ տեղեկությունների պրոակտիվ հրապարակման պահանջ: ՏԱ մասին օրենքը նաեւ հստակեցնում է, թե ինչ պարբերականությամբ պետք է պարտադիր հրապարակման տեղեկությունները մատչելի դարձվեն հանրության համար: Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանվում է. «տեղեկություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետևյալ տեղեկությունները և դրանցում կատարված փոփոխությունները»: Իսկ 4-րդ կետի համաձայն «Սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկություններում կատարված փոփոխությունները հրապարակվում են դրանք կատարվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում»: Կարելի է, որ ինտերնետով հրապարակելու պայմանը դրված է ՏԱ մասին օրենքում, սակայն ինտերնետով հրապարակելը պարտադիր է միայն այն դեպքում, երբ տեղեկություն տնօրինողն ունի կայք, այսինքն՝ որպես որպես հրապարակման հնարավոր ձևերից մեկը:

2016թ.-ի հունվարի 1-ից ուժի մեջ է մտած «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման եւ պահպանման, ինչպես նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 1204-Ն որոշմամբ նախատեսվեցին պրոակտիվ հրապարակայնության խթանման լրացուցիչ երաշխիքներ: Մասնավորապես, Որոշման 2-րդ հավելված 14-րդ կետի համաձայն՝ «Պետական մարմնի պաշտոնական կայքը պետք է ունենա «հաճախակի տրվող հարցեր» կամ այլ համապատասխան բաժին, որտեղ հրապարակվում են պարբերաբար (հինգ և ավելի անգամ) տրված միևնույն հարցերը և դրանց պատասխանները»:

ՀՀ կառավարությունը նաեւ անդամակցում է Բաց կառավարման գործընկերության միջազգային նախաձեռնությանը 2011 թվականից ի վեր: ԲԿԳ նախաձեռնությունը մշակել և լայնորեն տարածել է բաց կառավարման չափանիշներ: Այս չափանիշների կարելորագույն մասը վերաբերում է պրոակտիվ հրապարակման սկզբունքին: Չափանիշներով սահմանված տեղեկությունների մի մասն արդեն ներառված է ՏԱ մասին

օրենքի 7-րդ հոդվածում, սակայն մի շարք տեղեկություններ պրոակտիվորեն հրապարակելու պահանջ, որոնք պետք է լինեն հասարակության ուշադրության կենտրոնում, Օրենքում բացակայում է:

Ինֆորմացիայի ազատության կենտրոն հասարական կազմակերպության՝ 2015թ.-ի հրապարակած SU Ինդեքսը ցույց է տալիս, որ չնայած պրոակտիվ հրապարակայնության առումով գրանցված ընդհանուր առաջընթացին՝ տեղեկություն տնօրինող շատ մարմիններում սեփական նախաձեռնությամբ տեղեկություն հրապարակելու կարևորությունը լավ չի ընկալվում. պաշտոնական որևէ կայք լիովին չի ներառում SU մասին օրենքով սահմանված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները, շատ մարմինների կայքեր չեն պարունակում կարևոր և անհրաժեշտ բավարար տեղեկատվություն, շատ դեպքերում էլ առկա տեղեկությունը մատչելի և տեսանելի չէ և այն դժվար է գտնել:

Այսպես, մի կողմից Օրենքով պրոակտիվ հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկն արդիական չէ, բացակայում են հանրային հետաքրքրություն ներկայացնող մի շարք տեղեկություններ, մյուս կողմից տեղեկության պրոակտիվ հրապարակման պարտականությունը տեղեկություն տնօրինող գրեթե բոլոր մարմինները ոչ պատշաճ են իրականացնում:

Հայեցակարգային լուծումները

Ա. Վերանայել SU մասին օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը

- Հիմնվելով միջազգային լավագույն փորձի վրա, այդ թվում Բաց կառավարման գործընկերության շրջանակում մշակված թափանցիկության սկզբունքների վրա՝ SU մասին օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ցանկում ներառել հանրային հետաքրքրություն ներկայացնող լրացուցիչ տեղեկություններ (գործառնական տեղեկություններ, բյուջեների մասին տեղեկություններ, գնումների մասին տեղեկություններ եւ այլն),
- Օրենքում նշված դրույթից բացառել այն տեղեկությունները, որոնք մշակելը եւ պրոակտիվորեն հրապարակելը չունեն հանրային

հետաքրքրություն, սակայն հանգեցնում են պետական ռեսուրսների ոչ արդյունավետ ծախսման

Բ. Սահմանել տեղեկության պրոակտիվ հրապարակման մատչելի եւ հասանելի ձեւ.

- Ապահովել, որ տեղեկատվություն տնօրինողը տեղեկությունն այնպես հրապարակի, որ այն հնարավորինս արագ հասանելի լինի յուրաքանչյուր անձի համար:
- Սահմանել կառուցակարգեր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՁԼՄ-ներին իրենց տնօրինության տակ գտնվող եւ հանրային շահ ներկայացնող իրադարձությունների և փաստերի մասին տեղեկություններ տրամադրելու համար:
- Սահմանել, որ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ունենան պաշտոնական կայքեր՝ միևնույն ժանամակ նախատեսելով կառուցակարգեր, որ կայք ունեն ավու անհնարինության դեպքում տեղեկությունը հասանելի համացանցով: Սահմանել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կայքերի պահպանման պահանջները:

5. Անձի՝ ինքն իր մասին տեղեկություն ստանալու իրավունքը, անձի՝ հանրային նշանակության տեղեկություններ ստանալու իրավունքը

Առկա վիճակի նկարագրություն

2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է անձի՝ ինքն իր մասին տեղեկություն ստանալու իրավունքը: Եթե անձն իմացել է կամ գիտի, որ իր մասին, ներառյալ՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքի մասին պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, կամայական անվանում ունեցող պետական որևէ հիմնարկում առկա է տեղեկություն, ապա այդ անձին պետք է հասու լինի տվյալ տեղեկությանը՝ առանց ծանրաբեռնվելու որևէ, այդ թվում

վճարելու պարտականությամբ: Դա կարևոր է, որպեսզի անձն անհրաժեշտության դեպքում կարողանա արդյունավետ կերպով պաշտպանել իր պատիվն ու արժանապատվությունը, պաշտպանվել՝ ինչպես օգտագործելով տվյալ տեղեկությունը, այնպես էլ՝ հենց տվյալ տեղեկության ոչ իրավաչափ օգտագործումից: Այսպես, անձի վերաբերյալ որևէ տեղեկություն պետք է նրան հասու լինի անառարկելիորեն, առանց որևէ վճարի (սա չի վերաբերում այն դեպքերին, երբ վճարն անհրաժեշտ եւ ողջամիտ է՝ կապված տեղեկությունը տրամադրելու համար մատուցվող ծառայությունների եւ փաստացի ծախսերի հետ) կամ այլ պայմանի կամ նախապայմանի, անկախ նրանից, այդ տեղեկությունը որևէ գաղտնիք է, թե ոչ, անգամ տեղեկության գաղտնագրված լինելը չպետք է անձին իր մասին տեղեկության տրամադրումը մերժելու հիմք լինի:

Այս դիրքորոշումը բխում է ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերից, 42-րդ հոդվածի 1-ին մասից, 51-րդ հոդվածի 1-ին մասից, ինչպես նաև 61-րդ հոդվածի 1-ին մասից:

ՀՀ սահմանադրությունը երաշխավորում է նաև անձի՝ հանրային նշանակության տեղեկություն ստանալու անսահմանափակ իրավունքը: ՀՀ Սահմանադրության գիտագործնական մեկնաբանություններում բացահայտվել է ՀՀ Սահմանադրության նախկին խմբագրմամբ 27-րդ (այդ հոդվածին համադրելի են ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածները) եւ 27.1-րդ (այդ հոդվածին համադրելի է ՀՀ Սահմանադրության 53-րդ հոդվածը) հոդվածների բովանդակությունը: Մասնավորապես, մեկնաբանություններում նշված է՝ «Տեղեկույթն առաջադիմության գրավականն է: (...) Տեղեկույթը և տեղեկացվածությունը մեծ դեր են խաղում մարդու իրավունքների իրականացման գործում: (...) Քաղաքական իրավունքները ևս ուղղակիորեն կախված են տեղեկույթից: Տեղեկատվական թափանցիկությունը, բացախսությունը, կառավարական քաղաքականության կանխատեսելիությունը ժողովրդավարական գործընթացի կարևորագույն բաղադրատարրերն են, առանց որոնց ժողովրդաիշխանությունից մնում են միայն արտաքին ձևերը»: Դիմումի կամ առաջարկության շարժառիթներ կարող են լինել ոչ միայն անձնական, **այլ նաև հասարակական շահերի պաշտպանության նկատառումները:** Մեկնաբանություններում նշված է՝ «... Դիմելը քաղաքական իրավունք է: Մարդիկ հասարակական շահերը շոշափող և պարտադիր քննարկման ենթակա դիմում-առաջարկների միջոցով ներազդում են իշխանության մարմինների

գործունեության վրա, վերահսկում այն, նպաստում քաջքշուկի վերացմանը: ... Բնակչության դիմումները և առաջարկությունները տեղեկույթի կարևոր աղբյուր են հուզող խնդիրներն արագ, արդյունավետ լուծելու համար: Դիմելը երաշխիք է մարդու այլ իրավունքների համար: Դիմելու միջոցով գործի են դրվում այլ իրավունքները ոտնձգություններից, խախտումներից պաշտպանելու պետական կառուցակարգերը»:

Այսպես, սահմանադիրը պետական մարմիններից տեղեկություն կամ փաստաթղթեր ստանալու իրավունքը անմիջականորեն կապել է հասարակական շահերի պաշտպանության հետ:

Անձի՝ ինքն իր մասին եւ հանրային նշանակության տեղեկություն ստանալու իրավունքին անդրադարձել է նաեւ ՀՀ Սահմանադրական դատարանը՝ 2016թ.-ի փետրվարի 23-ի ՍՎԴ-1256 որոշմամբ: ՀՀ Սահմանադրական դատարանը, վերլուծելով ՀՀ Սահմանադրության 34-րդ եւ 51-րդ հոդվածները, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրության 78 (Համաչափության սկզբունքը), 79 (Որոշակիության սկզբունքը) եւ 80-րդ (Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիությունը) հոդվածները հանգել է այն եզրակացության, որ օրենքները (դրույթները) պետք է տարբերակված մոտեցում սահմանեն, երբ տեղեկատվությունը վերաբերում է անձի՝ իր մասին հայցվող տեղեկությանը կամ տեղեկատվության ազատության՝ օրենքով սահմանված երաշխիքների իրացմանը, այլապես կհակասեն ՀՀ Սահմանադրության վերոնշյալ հոդվածներին:

Անձի՝ ինքն իր մասին տեղեկություն ստանալու անսահմանափակ իրավունքի գաղափարն արտացոլվել է նաև նոր ընդունված օրենքներում: Այսպես, 18.05.2015թ. ընդունված «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը սահմանում է տվյալների սուբյեկտի՝ իր անձնական տվյալների վերաբերյալ տեղեկություններ ստանալու իրավունքը՝ նշելով, որ. «Տվյալների սուբյեկտն իրավունք ունի ստանալու տեղեկություններ իր անձնական տվյալների, տվյալները մշակելու, մշակելու հիմքերի և նպատակների, տվյալները մշակողի, նրա գտնվելու վայրի մասին, ինչպես նաև այն անձանց շրջանակի մասին, որոնց կարող են փոխանցվել անձնական տվյալները»:

Տեղեկատվության ազատության սահմանափակումները, ինչպես նաև այն դեպքերը, երբ տեղեկատվության ազատության իրավունքը չի կարող սահմանափակվել

սահմանված են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում, որի 1-ին մասի համաձայն «Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

- 1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.
- 2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.
- 3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.
- 4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).
- 5) խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝

- 1) վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաև տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին և դրանց հետևանքներին.
- 2) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը.
- 3) չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և հոգևոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա»:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հրապարակում կամ այլ մատչելի ձևով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության

առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը:»

Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում հետևյալ դեպքերում. (...) 4) սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում նշված տեղեկությունների տրամադրման մասին գրավոր հարցումներին պատասխանելիս. (...)»:

Այսպես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը թեև ընդհանուր SU սկզբունքների եւ SU իրավունքի ապահովման երաշխիքների համատեքստում անձին տալիս է ինքն իր մասին տեղեկություն ստանալու հնարավորություն, սակայն ուղղակիորեն չի նախատեսում անձի այդ իրավունքը: Նմանապես, թեև տալիս է հանրային նշանակության տեղեկություն ստանալու հնարավորություն, սակայն Օրենքում առկա չեն հանրային շահի բացահայտման երաշխիքներ, ինչպես նաև Օրենքում նախատեսված չեն Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հանրային նշանակության տեղեկությունների մատչելիության երաշխիքներ:

վերոնշյալից բխում է, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն ամբողջությամբ եւ որոշակիորեն չի արտացոլում ՀՀ Սահմանդրության 34-րդ հոդվածով երաշխավորված եւ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով առարկայացած՝ անձի՝ ինքն իր մասին տեղեկություն ստանալու իրավունքը, ինչպես նաև տեղեկատվության ազատության սահմանափակման իրավակարգավորումներում չի նախատեսում որեւէ կանոն անձի՝ ինքն իր մասին տեղեկություն ստանալու իրավունքի իրացման վերաբերյալ, Օրենքն ամբողջությամբ եւ որոշակիորեն չի արտացոլում ՀՀ սահմանդրության 42, 51 եւ 53-րդ հոդվածներով երաշխավորված՝ անձի՝ հանրային նշանակության տեղեկություն ստանալու իրավունքը:

Հայեցակարգային լուծումները

Ա. Սահմանել եւ ապահովել անձի՝ ինքն իր մասին տեղեկություն ստանալու իրավունքը

- հստակեցնել «իր մասին տեղեկություն» հասկացությունը:
- տեղեկատվության ազատության սահմանափակումները սահմանող դրույթներում նախատեսել, որ տեղեկատվության տրամադրումը չի

կարող մերժվել, եթե այն վերաբերում է անձի՝ ինքն իր մասին պահանջվող տեղեկություններին:

- տեղեկությունների տրամադրման պայմանները սահմանող դրույթներում նախատեսել, որ տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում, երբ տեղեկությունը վերաբերում է անձի՝ ինքն իր մասին պահանջվող տեղեկության տրամադրմանը:

Բ. Սահմանել եւ ապահովել անձի՝ հանրային նշանակության տեղեկություն ստանալու իրավունքը

- հստակեցնել «հանրային նշանակություն» հասկացությունը:
- տեղեկատվության ազատության սահմանափակումները սահմանող հոդվածում նախատեսել, որ տեղեկատվության տրամադրումը չի կարող մերժվել, եթե այն վերաբերում է հանրային նշանակության տեղեկություններին:
- տեղեկությունների տրամադրման պայմանները սահմանող դրույթներում նախատեսել, որ տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում, երբ տեղեկությունը վերաբերում է հանրային նշանակություն ունեցող տեղեկության տրամադրմանը:
- հստակեցնել հանրային նշանակություն ունեցող տեղեկատվության շրջանակը, վերանայել այն տեղեկությունների ցանկը, որոնց տրամադրումը չի կարող մերժվել, ինչպես նաեւ այն տեղեկությունների ցանկը, որոնք պետք է պրոակտիվորեն անհապաղ հրապարակվեն՝ հանրային մեծ նշանակություն ունենալու պատճառով:
- Կարգավորել տեղեկություն հանրային նշանակություն ունեցող ճանաչելու ընթացակարգերը:

Գ. Հստակեցնել տեղեկությունների դասակարգման չափանիշները (պետական, ծառայողական, առևտրային, անձնական գաղտնիք եւ այլն)

6. Տեղեկությունների համար վճարելու պայմանները եւ կարգը, տեղեկություններն անվճար ստանալու դեպքերը

Առկա վիճակի նկարագրություն

Վճարի հարցը ամենավիճահարույց խնդիրներից է տեղեկատվության ազատության ոլորտում: Լայն տարածում ունի այն տեսակետը, որ վճարը չպետք է լինի այնպիսին, որ հնարավորություն չտա դիմողներին դիմել տեղեկատվություն ստանալու համար, սակայն պետք է նշել, որ այս հարցի վերաբերյալ չկա միատեսակ մոտեցում ինչպես միջազգային պրակտիկայում, այնպես էլ տեսությունում: Պետական մարմիններ կատարում են մի շարք ծախսեր տեղեկատվությունը տրամադրելու համար, որոնք տեսականորեն կարելի է գանձել, ներառյալ փաստաթղթերի որոնումը, դրանց պատրաստումը, ինչպես նաև տեղեկատվության հասանելիության ապահովման իրական արժեքը, օրինակ փաստաթղթերի պատճենահանման ծախսերը: Տարբեր օրենքներում վճարի նկատմամբ առկա են տարբեր մոտեցումներ: Որոշ դեպքերում սահմանվում է վճար միայն պատճենման համար, մյուս դեպքերում տեղեկատվությունը դասակարգվում է ըստ խմբերի և դրա համաձայնել իրականացվում են գանձումներ: Այուսմենայնիվ, շատ հաճախ նշվում է, որ անկախ որդեգրած մոտեցումից, կարևոր է, որ վճարի գանձման կառուցվածքը և մեխանիզմները սահմանվեն կենտրոնական մարմինների կողմից, ոչ թե յուրաքանչյուր առանձին պետական մարմնի կողմից, որպեսզի ապահովվի տեղեկատվության հասանելիությունը:

Տեղեկատվություն ստանալու համար վճարելու կարգի, պայմանների, տեղեկատվությունը անվճար ստանալու դեպքերի մանրամասն կարգավորումը, տեղեկություններ ստանալու համար համաչափ վճարի սահմանումը ունեն առանցքային նշանակություն: Տեղեկատվություն ստանալու համար կատարվող գանձումների վերաբերյալ դրույթներ նախատեսվում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածում, որի 2-րդ մասը միայն սահմանում է այն դեպքերը տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում: Հիմք ընդունելով վերոհիշյալ օրենքի դրույթները՝ ՀՀ կառավարությունը 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1204-Ն որոշմամբ սահմանել է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը: Ըստ այդ կարգի՝ որոշակիացվել է

տեղեկությունների տրամադրման գործընթացը, այդ թվում՝ հստակ սահմանվել են տեղեկության տրամադրման համար գանձվող վճարների որոշման հետ կապված դրույթներն այն դեպքերի համար, երբ ըստ օրենքի տեղեկատվությունն իրականացվում է վճարովիության սկզբունքին համապատասխան:

Չնայած կատարված որոշակիացումներին՝ դեռևս առկա են մի շարք անհստակություններ տեղեկությունների համար վճարելու պայմանների և կարգի, տեղեկություններ անվճար ստանալու դեպքերի վերաբերյալ: Մասնավորապես՝ Օրենքը նշում է միայն սահմանափակ թվով դեպքեր, երբ չի իրականացվում տեղեկատվության համար գանձում(բանավոր հարցումների պատասխաններ, մինչև 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկատվության տրամադրում տեղեկությունները էլեկտրոնային փոստով տրամադրում և այլն) սակայն,

- հստակորեն սահմանված չեն անձի ինքն իր մասին, ինչպես նաև հանրային նշանակություն ունեցող տեղեկություններ ստանալու համար վճարվող գանձումների կարգ ու պայմանները,
- ներկայացված չեն այն չափանիշներ, որոնց հիման վրա հաշվարկվում են տեղեկատվության համար գանձվող գումարները:

Առկա խնդիրները էլ ավելի են կարևորվում ՀՀ Սահմանադրական դատարանի 2016 թվականի ՍԴՈ-1256 որոշման լույսի ներքո, որով առանձնակի կարևորել է տարբերակված մոտեցման սահմանումը, երբ տեղեկատվությունը վերաբերում է անձի՝ իր մասին, ինչպես նաև հանրային նշանակություն ունեցող տեղեկություն ստանալուն:

Հայեցակարգային լուծումները

Ա. Սահմանել տեղեկության համար վճարը հաշվարկելու չափանիշները եւ վճար գանձելու ընթացակարգերը:

- սահմանել, թե որ դեպքերում տեղեկությունը չի կարող լինել վճարովի:
- սահմանել անվճար տրամադրվող տեղեկությունների ծավալները:

Որպես հնարավոր տարբերակ կարող է դիտարկվել այն մոտեցումը, որ որպես ընդհանուր կանոն ամրագրվում է, որ տեղեկատվության տրամադրումը անվճար է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Դիմումատուից միայն պետք է գանձվեն տեղեկատվության վերարտադրման (պատճենման կամ այլ նյութական կրիչի

վրա ամրագրման) և առաքման իրական ծախսերը: Հարկ է նշել, որ այս դեպքում լիազորված մարմնի կողմից պետք է սահմանվեն տեղեկատվության վերարտադրման իրական ծախսերի համար գանձվող առավելագույն գումարի չափը՝ ամրագրելով նաև որոշակի քանակությամբ էջերի (ներկայիս կարգավորման օրինակով 10 էջ) պատճենման անվճարովիությունը: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է սահմանել, որ այն դեպքերում, երբ օրենքներով նախատեսվում տեղեկատվության տրամադրման վճար, պետք է երաշխավորիվի հանրային նշանակություն ունեցող տեղեկատվության, ինչպես նաև անձի ինքն իր մասին տեղեկատվություն ստանալու անվճար տրամադրումը: Նախատեսել, որ այն դեպքերում, երբ տեղեկատվության տրամադրման համար գանձվում է գումար պետական մարմինը կարող է նվազեցնել վճարի չափը, եթե դիմումատուն գտնվում է ծանր ֆինանսական դրության մեջ, ուստի կարծում ենք անհրաժեշտ է ամրագրել, այս ընթացակարգերը ևս:

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ
ՏԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

1. Տեղեկատվության ազատության համար պատասխանալու լիազոր մարմինը (ՏԱ հանձնակատարի ինստիտուտը)

Ավելի քան 12 տարի է՝ գործում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, սակայն օրենքի ընդունումից ի վեր ՏԱ պրակտիկան ցույց է տալիս, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրառումը բավարար չէ:

Այսօր Հայաստանում տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության միակ հնարավորությունը դատական պաշտպանության իրավունքն է: Այնուամենայնիվ, դատական պաշտպանության առաձնահատկությունները հնարավորություն չեն տալիս պրակտիկայում առանց պետական հոգաձության լուծել տեղեկատվության ազատության ոլորտի խնդիրները: տեղեկատվությունը շատ շուտ հնանում է, իսկ դատաքնության երկարաժամկետ լինելու դեպքում այն այլևս անհարժեշտ չի լինում բողոքարկող կողմին: Բացի այդ, դատարան դիմելը որոշակի ծախսեր է ենթադրում: Դատական կարգով ՏԱ իրավունքի պաշտպանության ապահովումը մինչ այսօր մեծիմասամբ իրականացնում են հասարակական կազմակերպությունները: Օրինակ, ՀՀ-ում ՏԱ ոլորտում մասնագիտացված միակ կազմակերպությունը՝ Ինֆորմացիայի ազատությանը կենտրոն ՀԿ-ն նախաձեռնել է 50-ից ավել ռազմավարական դատական գործ: Հիմնականում ՀԿ-ներն են իրականացնում ՏԱ իրավունքի վերաբերյալ հանրային իրազեկման եւ տեղեկություն տնօրինողների կրթման գործառույթները:

Տեղեկատվության ազատության իրավունքի արդյունավետ պաշտպանությունը եւ այս իրավունքի կիրառման դրական պրակտիկայի զարգացման երաշխիքը իրավունքի իրացման նկատմամբ պետական հոգաձությունն է: Իրավունքի պատշաճ կիրառման համար անհրաժեշտ է ստեղծել լիազոր մարմին, որը ՏԱ սկզբունքների, ՏԱ օրենսդրության, ինչպես նաեւ ՏԱ իրավունքի կիրառման պրակտիկայի վերլուծությունների հիման վրա կիրականացնի տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանությունը, ՏԱ իրավունքի խախտման դեպքում իրավունքի վերականգնումը, ՏԱ վիճակի գնահատումը եւ ՏԱ իրավունքի զարգացման ապահովումը,

ինչպես նաև SU իրավունքի մասին իրազեկում, կրթում եւ խորհրդատվության տրամադրում: Տեղեկատվության ազատության ոլորտի լիազոր մարմինը տեղեկատվության ազատության հանձնակատարի ինստիտուտն է (այսուհետ նաև՝ SU հանձնակատար, Հանձնակատար):

SU հանձնակատարը պետք է ունենա անկախության երաշխիքներ եւ առնվազն.

- Իրականացնի տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանություն,
- Իրականացնի SU պրակտիկայի վերլուծություն եւ լավագույն փորձի ներդրում,
- Ապահովի SU իրավունքի իրացման վերաբերյալ խորհրդատվություն ինչպես քաղաքացիների, այնպես էլ տեղեկություն տնօրինող մարմինների համար,
- Ապահովի SU ոլորտի օրենսդրության պարզաբանում:

SU հանձնակատար ունենալու պահանջն անուղղակիորեն սահմանված է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում: Այսպես, SU մասին ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ «Տեղեկատվության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան»: Լիազորված պետական կառավարման մարմինը կարող է լինել SU հանձնակատարի ինստիտուտը, ինչպես ցույց է տալիս միջազգային պրակտիկայի վերլուծությունը: Հենց SU հանձնակատարն է հանդիսանում Օրենքում նշված՝ SU իրավունքի խախտումների բողոքարկման արտադատական մարմին՝ լիազորված պետական կառավարման մարմին:

SU հանձնակատարը/լիազոր մարմինը պետական մարմին է, որը արտադատական կարգով լուծում է տեղեկատվության ազատության ոլորտում առաջացած վեճերը:

SU հանձնակատարը պետք է ունենա անկախության երաշխիքներ: Հանձնակատարի հիմնական նպատակը SU օրենսդրության կիրառումն է: SU հանձնակատարի/լիազոր մարմնի ինստիտուտի հիմնական նպատակները ներառում են նաև տեղեկատվության ազատության իրավունքի խթանումը և SU իրավունքի խախտումների բողոքարկումը:

1. SU հանձնակատարի ստեղծումը ծառայում է SU իրավունքի պաշտպանությանը՝ SU օրենսդրության կիրառման և տեղեկություն ստանալու իրավունքի

խախտումների բողոքարկման գործընթացներում չարաշահումները բացառելու միջոցով: Միևնույն ժամանակ հասարակությունը կարիք ունի իմանալու, թե ինչպես է գործում SU իր իրավունքը, ինչպես պետք է դիմել տեղեկություն ստանալու համար, տեղեկություն ստանալու ինչ ընթացակարգ գոյություն ունի և վերջապես, ինչպես բողոքարկել իրենց SU իրավունքի խախտումները: Կարևոր է նաև, որպեսզի հասարակությունն իմանա, թե օրենքով նախատեսված SU սահմանափակումների հիման վրա որ տեղեկատվության տրամադրումն է ենթակա մերժման, որպեսզի հիմնավոր մերժումները չհանգեցնեն պետական մարմինների հանդեպ վստահության նվազման:

2. SU հանձնակատարը պետք է լինի SU իրավունքի խախտումների անկախ վերանայում իրականացնող մարմին: Որպես գործունեության հիմնական նպատակ՝ SU հանձնակատարը պետք է ընդունում եւ քննում է SU իրավունքի խախտման վերաբերյալ բողոքները, ունի նաև խախտումները բողոքարկելու իրավասություն:
3. SU հանձնակատարը պետք է հավաքագրի SU իրավունքի կիրառման պրակտիկայի մասին տեղեկատվություն՝ վիճակագրություն այն մասին, թե քանի հարցում է ներկայացվել տեղեկություն տնօրինողներին, քանիսն են պատասխան ստացել, ինչ ժամկետներում, հիմնականում ինչ խնդիրներ են բարձրացվել հարցումների միջոցով և այլն: Այս տվյալներից յուրաքանչյուրն էլ իր հերթին ուղեցույց է SU իրավունքի առավել արդյունավետ իրականացման համար:
4. SU հանձնակատարն պետք է իրականացնի տեղեկատվության ազատության վերաբերյալ լավագույն փորձի մասին իրազեկում, խորհրդատվություն տա, կրթի տեղեկություն տնօրինողներին եւ քաղաքացիներին:

SU հանձնակատարի ինստիտուտը ներդնելու համար անհրաժեշտ է

- սահմանել SU հանձնակատարի գործառույթները,
- սահմանել SU հանձնակատարի իրավունքները, իրավասության ոլորտները,
- սահմանել SU հանձնակատարի պարտականությունները,
- սահմանել SU հանձնակատարի ձեւը,
- ապահովել SU հանձնակատարի որոշումների կայացման եւ իրականացման գործուն մեխանիզմներ,

- սահմանել իրական երաշխիքներ SU հանձնակատարի/լիազոր մարմնի անկախության ապահովման համար (նշանակման/ընտրության մեխանիզմներ, ֆինանսական անկախություն): Ընդ որում, սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց կլինի SU հանձնակատարի ներառումը պետական կառավարման մարմնի կազմում: Դա նաեւ էականորեն կխաթարի SU հանձնակատարի ինստիտուտի անկախությունը եւ արդյունավետությունը: Այս առումով գտնում ենք, որ SU հանձնակատարի ինստիտուտի ներդրման համար լավագույն տարբերակը ՀՀ սահմանադրության համապատասխանության եւ արդյունավետության ապահովման տեսանկյունից SU հանձնակատարի ստեղծումը կամ որպես կառավարության ենթակա մարմին, որի սահմանադրական հիմքը ՀՀ սահմանադրության 159-րդ հոդվածն է, կամ որպես ինքնավար մարմին, որի սահմանադրական հիմքը ՀՀ սահմանադրության 122-րդ հոդվածն է:

2. SU պատասխանատուների ինստիտուտի ներդրումը

Տեղեկատվության ազատության իրավունքի պատշաճ ապահովման համար անհրաժեշտ է որպեսզի ստեղծվի տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության միասնական համակարգ, տեղեկություն տնօրինող յուրաքանչյուր մարմնում առկա լինի համապատասխան պաշտոնյա, ով կհամակարգի եւ կկազմակերպի տվյալ մարմնի գործունեությունը SU ոլորտում:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-ին մասի համաձայն «Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝ (...) 5) նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին:»:

Նույն օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ «1. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձը կարող է լինել տեղեկատվություն տնօրինողի նշանակված պաշտոնատար անձը կամ տեղեկատվություն տնօրինողի ղեկավարը:

Այսպես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ յուրաքանչյուր տեղեկություն տնօրինող պետք է ունենա տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձ (այսուհետ՝ ՏԱ պատասխանատու): Օրենքի վերոնշյալ դրույթներն առարկայացել են «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման եւ պահպանման, ինչպես նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 1204-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում), որով Որոշմամբ սահմանված կարգերով նախատեսվել են ՏԱ պատասխանատուի ինստիտուտի ներդրման կանոններ (Որոշման Հավելված 1-ի 2-5 կետեր):

Պրակտիկայում 2015թ.-ի ընթացքում պետական կառավարման մի շարք մարմիններում (ՀՀ բոլոր նախարարություններում, մարզպետարաններում, կառավարությանն առընթեր մարմիններում) նշանակվել են ՏԱ պատասխանատուներ:

Չնայած ՏԱ պատասխանատուի ինստիտուտի ներդրման որոշակի կանոնակարգմանը ՀՀ կառավարության N 1204-Ն որոշմամբ՝ առկա են խնդիրներ, որոնք ենթակա են կարգավորման Օրենքով:

Մասնավորապես, ՏԱ պատասխանատուներ նշանակվել են հիմնականում պետական կառավարման միայն որոշ մարմիններում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանում, այնինչ ՏԱ պատասխանատու ունենալուն պահանջը վերաբերում է բոլոր տեղեկություն տնօրինողների:

Բացի այդ՝ ՏԱ պատասխանատուներն այսօր օժտված չեն բավարար լիազորություններով տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումն ապահովելու համար:

Հաշվի առնելով այն, որ ՏԱ պատասխանատուի ինստիտուտի կայացումը կարելի է ցանկացած տեղեկություն տնօրինողի՝ տեղեկատվության ազատության ոլորտում իր գործունեությունը պատշաճ կազմակերպելու համար՝ անհրաժեշտ է ՏԱ պատասխանատուի «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, այդ թվում՝

- Որոշմամբ ՏԱ պատասխանատուի վերաբերյալ առկա կարգավորումներն ամրագրել Օրենքի մակարդակով,
- նախատեսել ՏԱ պատասխանատուի պարտականությունների իրականացման երաշխիքներ:

3. Պատասխանատվությունը

Ինչպես յուրաքանչյուր իրավունքի, այնպես էլ ՏԱ իրավունքի պատշաճ իրականացման երաշխիքներից է այդ իրավունքի խախտման համար պատասխանատվությունը: Ընդ որում, պատասխանատվության վրա հասնելը մի կողմից ծառայում է իրավունքի վերականգնմանը, մյուս կողմից ունի կանխարգելիչ դեր հետագա խախտումները բացառելու համար:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը սահմանում է, որ բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, տեղեկություն տրամադրելուց հրաժարվելը կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելը, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում տեղեկությունը ապօրինաբար չտրամադրելու համար պատասխանատվության միջոց, մինչդեռ թե «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը և թե միջազգային փորձը ցույց է տալիս, որ կան նաև այլ զանցակազմեր, որոնց պարագայում պաշտոնատար անձը պատասխանատվության կարող է ենթարկվել: Մասնավորապես, վարչական պատասխանատվություն կարող է սահմանվել ոչ հավաստի տեղեկատվության, ոչ լիարժեք տեղեկատվության տրամադրման, ինչպես նաև պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվությունը դիտավորյալ չհրապարակելու կամ սխալ տեղեկատվություն հրապարակելու համար:

Վարչական պատասխանատվություն կիրառելու պարագայում անհրաժեշտ է պատասխանատվություն սահմանել նաև սխալ, ոչ լիարժեք, աղավաղված տեղեկություն տրամադրելու համար, ինչպես նաև օրենքով նախատեսված տեղեկատվությունը չհրապարակելու համար («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ

հողված 2-րդ մաս): Ընդ որում տուգանքի չափ ընտրելիս պետք է այն համաչափ լինի կատարված խախտմանը:

Վարչական պատասխանատվությունը կիրառվում է դատարանի վճռով պաշտոնատար անձի նկատմամբ: Հանձնակատարի ինստիտուտի ներդրման դեպքում նման լիազորություն կարելի է վերապահել Հանձնակատարին:

Պատասխանատվության տեսակը ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել դրա պատժիչ բնույթը և այն հանգամանքը, թե արդյոք այդ միջոցը կնպաստի, որպեսզի իրավախախտը հետագայում նման խախտումներ չկատարի: Անձի տեսանկյունից, ում իրավունքները խախտվել են կարևոր է, որպեսզի այդ խախտումը վերացվի և իրեն տրամադրեն անհրաժեշտ տեղեկատվությունը:

Այս տեսանկյունից անհրաժեշտ է հաշվի առնել նաև կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման հնարավորությունը, որոնք կարող են կանխիչ դեր կատարեն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կարգապահական տույժերի մեջ նախատեսված է նաև զբաղեցրած պաշտոնից ազատելը:

Սակայն կարևոր հարց է, թե ով պետք է կիրառի կարգապահական տույժերը: Եթե տեղեկատվության պատասխանատու անձ դիտարկում ենք համապատասխան գերատեսչության համապատասխան վարչության պետին, ապա կարգապահական տույժ կիրառում է աշխատակազմի ղեկավարը: Եթե որպես պատասխանատու անձ դիտում ենք աշխատակազմի ղեկավարին, ապա վերջինիս նկատմամբ կարգապահական տույժ կիրառում է ՀՀ վարչապետը՝ նախարարի առաջարկությամբ, իսկ պաշտոնից ազատել կարգապահական տույժը՝ ՀՀ կառավարությունը՝ նախարարի առաջարկությամբ:

Կարգապահական պատասխանատվություն կիրառելը կարելի է արդարացնել այն տեսանկյունից, որ պատասխանատու անձը չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել իր պարտականությունները: Մյուս կողմից կարևոր է, որ այդպիսի միջոցները իրականում կիրառվեն, հակառակ դեպքում այն չարաշահումների տեղիք կտա: